ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4651-Ա « 17 » նոյեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 01/50-02-1519-24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 01/50-02-1599-24 ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N ՇԹ/3/9933-25 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

1.Երևանի քաղաքապետի 2024 թվականի օգոստոսի 30-ի N 01/50-02-1519-24 շինարարության թույլտվության 2.1 կետում՝ «Ավարտական ակտի տրամադրումից (շինության ավարտի պետական գրանցման հաջորդ օրվանից) 6 ամսվա ընթացքում» բառերը փոխարինել «Ավարտական ակտի տրամադրումից (շինության ավարտի պետական գրանցման հաջորդ օրվանից) 11 ամսվա ընթացքում» բառերով:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N 01/50-02-1599-24 և 2025 թվականի հուլիսի 9-ի N ՇԹ/3/9933-25 շինարարության թույլտվությունները:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ